

**ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ «ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ,
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ***

2012-ին հրատարակված այս ուշագրավ ժողովածուն¹ ընդգրկում է վաստակաշատ գրականագետ Ժենյա Քալանթարյանի տարբեր տարիների անդրադարձները մեծ բանաստեղծի ստեղծագործության շրջափուլերին, առանձին քերթվածներին և գրական հիմնախնդիրներին: Ժողովածուի մեջ ներառված հոդվածները դասավորված են ոչ թե իրենց ստեղծման շարակարգությամբ, այլ Եղիշե Չարենցի ստեղծագործությունների ժամանակագրությամբ, ինչն ապահովում է չարենցյան ներքին ժամանակի ընկալման որոշակի ընթացքն ու ամբողջականությունը՝ ընդգծելով գրականագիտական ուսումնասիրության համար ելակետային՝ գրող-ժամանակ հարաբերությունը:

Ինչպես էր բանաստեղծն ընկալում իր ժամանակը, և ժամանակի ընթացքում՝ սերունդների հերթագայությամբ ինչպես է փոխվում նրա ստեղծագործության ընկալումը: Գրող-ժամանակ հարաբերության այս փոխալայմանավորված կերպերի քննության առանցքի շուրջ է կառուցված Եղիշե Չարենցի ստեղծագործության քալանթարյանական ուսումնասիրությունը:

Չարենցագիտության զարգացման ամբողջ ընթացքում արդիական են եղել և տեղին են «տուրք ժամանակին», «ներկայի հարահոս», «մոլորություն», «սխալ գնահատական», «մարգարեություն», «անցյալի վերագնահատում ու ժխտում հանուն ապագայի»՝ հակասական հասկացությունները, որոնք, հեղինակի կեցության ժամանակներում և հատկապես հինա Չարենցի բազմաշերտ ստեղծագործության տարբեր մեկնությունների ու ընթերցումների հնարավորություն են տալիս: Գրական ստեղծագործության արտաքին ու ներքին ազդակների և օրինաչափությունների քննությամբ է այս հասկացություններին անդրադառնում Ժ. Քալանթարյանը:

Չարենցյան հայտնի խոսքը ներկայի տուրք չէ միայն, քանզի «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր» նշանաբանով նա չի ժխտում անցյալի խորհուրդը: Ընդհակառակը, անցյալի ու ապագայի միջև դեռևս ընթացքի մեջ գտնվող ու վավերականություն չստացած ներկան բանաստեղծը փորձում է ընկալել ու գեղարվեստորեն իրացնել հայ

* Ընդունվել է տպագրության 8.03.2013:
1 Քալանթարյան Ժ., Եղիշե Չարենց, Ուսումնասիրություններ, խմբ.՝ Վ.Գաբրիելյան.- Եր.: ԵՊՀ հրատ.,2012, 312 էջ: (Հետայսու ժողովածուից կատարված մեջբերումների էջերը կնշվեն տեքստում փակագծերի մեջ):

Ե (ԺԵ) քաթի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

մշակույթի հավերժական նշաններով: Հեթանոսական աշխարհայացքի դրսևորում առասպելներն առավելապես օգտագործվում են բանաստեղծի ստեղծագործության խորհրդապաշտական շրջանում, սակայն հետագա շրջափուլերում դրանք ևս առկա են՝ որպես ներկայի կողավորման, նրա ողբերգությունները հասկանալու բանալի:

Եղիշե Չարենցի ու գրական հեթանոսության, Չարենցի ու Դանիել Վարուժանի առնչությունները նախկինում ևս քննության առարկա են եղել (Սուրեն Աղաբաբյան, Ալմաստ Ջաքարյան և ուրիշներ), սակայն Ժենյա Քալանթարյանն իր «Մի քանի նրբերանգներ Չարենցի «հեթանոսականից»» հոդվածում նոր փաստերի հիման վրա սահմանելով այդ հարաբերությունների երկակի բնույթը, դրանց անդրադարձել է այլ կողմից: Ուսումնասիրողը փաստում է, որ հեթանոսական առասպելույթները, հին հայոց առասպելաբանության հերոսները՝ Արան, Շամիրամը, բանաստեղծի ստեղծագործության մեջ տևական կյանք են ունենում և իրացվում ոչ միայն ստեղծագործության վաղ շրջանում, այլև 1930-ականներին՝ Աղասի Խանջյանի ողբերգական մահվան համատեքստում: Խանջյան-Չարենց հարաբերություններն ավանդաբար դիտարկվել են կան գուտ կենսագրական, կան առաջին հերթին՝ «Դոֆին Նաիրյան» հայտնի շարքի առնչությամբ: Ա. Խանջյանին նվիրված սոնետների այս շարքում առավելապես իրացվում են քրիստոնեական խորհրդանիշեր, սակայն սոնետներից մեկի տարբերակում Հիսուսին փոխարինում է Արան: Այս փոխատեղումն ու Շամիրամի և Արայի կերպարների չարենցյան կիրառությունների նորովի ընթերցումը հնարավորություն են տալիս Ժ. Քալանթարյանին որպես Խանջյանին նվիրված ստեղծագործություն դիտարկել նաև «Հին պարտության լեզենդը» բանաստեղծությունը:

Գրականագետը, հիմնվելով բանաստեղծության կառուցվածքի, թեմայի ու գաղափարի քննության վրա, մատնանշում է, որ Ա. Խանջյանի սպանությունը Չարենցն ընկալում է որպես Արայի պարտության պարբերական արձագանքներից մեկը:

Ուշագրավ են նաև Ժ. Քալանթարյանի ««Աթիլլա» պոեմը» հոդվածում առկա դիտարկումները Եղիշե Չարենցի ստեղծագործության առաջին շրջանի վերաբերյալ. ««Դանթեական առասպելից» մինչև «Աթիլլա» ընկած շատ կարճ ժամանակամիջոցում Չարենցի աշխարհայացքն ու ստեղծագործությունն ապրել են տրամաբանական որոշակի զարգացում: Որքան էլ ներքին սերտ կապով հիշյալ երեք պոեմները կապված են իրար հետ, նրանցից յուրաքանչյուրը ստեղծագործական որոնումների նոր, նախորդից տարբեր փուլի արտահայտություն է: «Աթիլլան» ինչ-որ չափով պատասխանում է նաև նախորդ պոեմներում առաջ քաշած հարցադրումներին» (էջ 36): Գրականագետի կարծիքով՝ պոեմի հիմնական հարցադրումներն են պատերազմի՝ որպես հավերժական չարիքի դատապարտումը, վրեժխնդրության անհրաժեշտությունն ու հին աշխարհի կործանումը: Անդրադառնալով դրանց իրացմանը և բանավիճելով «Աթիլլայի» վերաբերյալ չարենցագիտության մեջ հնչեցված որոշ չափով միակողմանի այն տեսակետների հետ, ըստ որոնց՝ Աթիլլան բուրժուական հասարակարգի վրա կախված չարիք է (Եղիշե Չարենց), Արևմուտքի

սանձագերծած կործանիչ պատերազմի դեմ ընդվզում (Սուրեն Աղաբաբյան, Հակոբ Սալախյան), բարբարոսների գովք (Պողոս Մակինցյան), ժենյա Քալանթարյանն իրավացիորեն առաջ է քաշում այդ կերպարն իր գարգացման մեջ, բազմակողմանորեն և «Վահագն» պոեմի հետ անմիջական կապով մեկնաբանելու անհրաժեշտությունը: Հայսմ, ըստ գրականագետի, չարենցյան ստեղծաբանական հղացքը ամբողջանալու համար առասպելական Վահագնից հետո իրական, պատմականորեն հզոր, թեև կործանիչ ուժով օժտված վրեժխնդիր Աթիլայի կերպարի իրացման կարիքն ուներ:

Ընդհանրապես, չարենցյան պոեմներն առանձնահատուկ են ժանրի խորը և բազմակողմանի ընկալման ու համապատասխան արտահայտչականության շնորհիվ: Պոեմի ժանրի չարենցյան իրացումներին ժ. Քալանթարյանն անդրադառնում է ժողովածուում ընդգրկված գրեթե բոլոր հոդվածներում և հատկապես **«Ավանդների և նորարարության դիպլեկտիկան Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուում»** և **«Չարենցի պոեմների ներժանրային հարցեր»** ուսումնասիրությունների մեջ:

Նախ՝ դեռևս 1987-ին գրված «Գիրք ճանապարհիին» նվիրված իր հոդվածում ժ. Քալանթարյանը հանգամանակից քննում է գրքի գեղարվեստական իրականության մեջ պոեմների ունեցած նշանակությունը՝ ընդգծելով դրանց գաղափարական միասնությունն ու բանաստեղծի ընտրած թեման լավագույնս իրացնելու կարողությունը. «Պատմական հայացքը անցյալի վերաբերյալ՝ ժողովածուի գաղափարական ու փիլիսոփայական հիմքն է և պայմանավորում է նրա կառուցվածքային առանձնահատկությունները: «Պատմության քառուղիներով» վերնագրի տակ ամփոփված պոեմների շարքը մի կուռ ամբողջություն է ոչ միայն այն պատճառով, որ բոլոր պոեմներն էլ արտացոլում են պատմական անցյալի տարբեր պահերը, այլև արտաքնապես խիստ տարբեր, մռայլ կամ լավատեսական, հաջողված և չհաջողված բոլոր պոեմներում գրեթե միատեսակ վերաբերմունք կա հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհի վերաբերյալ» (էջ 153-154),- գրում է ուսումնասիրողը:

Հայոց անցյալի ու նրա մասին կիսաառասպելական պատկերացումների վրա հիմնված ներկայի քննադատությունն ու երգիծումը դրսևորվում է նաև բոլոր առումներով բացառիկ «Երկիր Նաիրի» վեպում: Այն հեղինակային բնորոշմամբ՝ «պոեմանման վեպ» է: ժ. Քալանթարյանը, անդրադառնալով վեպի ժանրային բնութագրումներին և ամփոփելով տարբեր ուսումնասիրությունները, կարողանում է չարենցագիտության մեջ առաջին անգամ ամբողջապես բացատրել հեղինակային բնորոշումը, նուրբ ու ձգգրիտ դիտարկումներով ցույց տալ, որ վեպի քնարականությունը ծնվում է նրանից, որ հեղինակը պատումի ողբերգականությունն արտահայտում է ոչ թե կերպարների միջոցով, այլ հեղինակապատմողի հույզերի. «Երկի հուզականությունը դրսևորվում է ռիթմիկ արձակի, շրջուն շարադասության, բազմաթիվ քնարական շեղումների, ընթերցողին ուղղված պատմողի հաճախակի դիմումների, երևույթներին նրա կողմից տրված անմիջական գնահատականների և այլ միջոցների

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե (ԺՅ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (42) ԱՊՐԻԼ-ՀԱՅԻՍ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

շնորհիվ: Ուրեմն՝ ցավից ու սիրուց ծնվող հուզականությունը և այս հուզականության դրսևորման միջոցներն էլ բացահայտում են «պոեմանման» արտահայտության իմաստը՝ միաժամանակ մատնանշելով նրա գաղափարական հիմքը» (էջ 58):

2012 թվականին գրված ժամանակագրորեն վերջին՝ **«Չարենցի պոեմների ներժանրային հարցեր»** ծավալուն ուսումնասիրության մեջ ժ. Քալանթարյանը, վերստին անդրադառնալով Չարենցի ստեղծագործության համար կարևոր այս խնդրին, փաստում է, որ բանաստեղծը շուրջ հիսուն պոեմի հեղինակ է, ինչը բացառիկ է հայ գրականության համար: Որպես ելակետ ընդունելով պոեմի ժանրի զարգացման ու փոփոխությունների ստորոգությունը՝ գրաքննադատը Չարենցի պոեմների ժանրային բազմազանությունը պայմանավորում է բանաստեղծի բացառիկ տաղանդով, անհատականությամբ ու անընդհատ կատարելագործվելու ձգտմամբ:

Չարենցի պոեմների ժանրային էության ճիշտ ընկալման համար, ըստ գրականագետի, կարևոր է դրանցում քնարական ու էպիկական տարրերի հարաբերակցության պարզումը: Այս տեսանկյունից էլ քննության են ենթարկվում «Խմբապետ Շավարշ» և «Մահվան տեսիլ» պոեմները, կատարվում են նրբին դիտարկումներ դրանց ժանրային կառույցի վերաբերյալ, միանգամայն նորովի են բացահայտվում նաև կերպարակերտման սկզբունքները: Քննադատն իրավացիորեն նկատում է, որ Չարենցի պոեմների մեծ մասն, այդուհանդերձ, ունի քնարական բնույթ, քիչ են կերպարները, որոնք, սակայն, հոգեբանորեն խորն են, համոզիչ, բարդ ու դրամատիկ: Դրանցում քնարական ու էպիկական տարրերի հարաբերակցությունը պայմանավորված է նաև հեղինակ-հերոս կապով, որն ըստ ժ. Քալանթարյանի՝ առաջնային է «Դանթեական առասպել», «Կոմունիստների պատը Փարիզում» պոեմներում: Այստեղ որոշակիորեն նույնասուն են «հերոս» և «հեղինակ» հասկացությունները, ինչն էլ անդրադառնում է պոեմների ոճի վրա. հայտնվում է հրապարակախոսական հնչողություն՝ մենախոսության տարրերով:

Չարենցի պոեմի արվեստի վերաբերյալ քննադատի հիմնարար դիտարկումները նորովի են մեկնաբանում բանաստեղծի՝ այս ժանրին բազմակի անդրադարձների նպատակներն ու արդյունքները: Բացահայտվող առանձին նրբերանգներն ամփոփվելով՝ դրանք ստեղծում են չարենցյան պոեմի ժանրային էության ամբողջական պատկերը. «Չարենցի պոեմներից շատերին բնորոշ է կան հուզական, կան դրամատիկ լարվածությունը և անհանգստությունը, որն ավելի շատ արտահայտվում է հերոսների ներաշխարհում, քան գործողությունների մեջ, ինչպես նաև հեղինակային խոսքի, ռիթմի արագությամբ: Չարենցի կարևոր նորամուծություններից մեկը բանաստեղծի և հանրության միջև տարածության կրճատումն է» (էջ 266),- եզրակացնում է գրականագետը:

Իր **«Բանաստեղծի դրամատիկական որոնումները»** ուսումնասիրության մեջ խոսելով 1920-ականների արվեստի նոր գեղագիտության ու վերջինիս ցայտուն իրացումը հանդիսացող Չարենցի դրամատիկական գործերի մասին՝ Ժենյա Քալանթարյանը նկատում է, որ նույնիսկ բեմում

խաղացված «Կապկազ թամաշայի» պարագայում Չարենցը կրկին ավելի շատ պոեմ էր ստեղծում, քան պիես, քանի որ ժխտում էր ակադեմիական թատրոնն ու այդ թատրոնի հիմնական ժանրը՝ պիեսը: Սակայն նույնիսկ դասական արվեստի սկզբունքների բացասմամբ ստեղծված գործերը և հատկապես նորարարական «Կապկազ թամաշա» պիես-պոեմը թե՛ իր գաղափարով և թե՛ գեղարվեստական իրացման մակարդակով բացառիկ երևույթներ էին ինչպես Չարենցի ստեղծագործության, այնպես էլ հայ գրականության մեջ:

Ըստ գրականագետի՝ դրամատիկական մյուս գործերը՝ «Աքիլլեն, թե՛ Պյերո», «Մտուղեն ամուսիններ կամ ինքնիրեն կոմունիզմ», նույնպես որոշակիորեն մոտենում են պոեմի ժանրին և այսօր ունեն ավելի շատ գրապատմական արժեք: Մշտապես առաջինը լինելու, բանաստեղծական բոլոր ձևերը փորձելու, արվեստն ու գրականությունը նոր ժամանակներին համապատասխանեցնելու ձգտումները Եղիշե Չարենցին թեն հաճախ հեռացնում էին գրականության դասական ավանդներից, նոր թեմաներ ու արտահայտչամիջոցներ պարտադրում, սակայն ազգային խնդիրներն ուղղակի կամ անուղղակի արտացոլվում էին նրա ամբողջ ստեղծագործության մեջ: Նույնիսկ «Կապկազ թամաշայում» ծաղրի միջոցով բանաստեղծն արձագանքում էր ազգային-քաղաքական կարևոր հարցերին: Եվ բնական է, որ ազգային ողբերգությունը՝ Մեծ եղեռնը, չէր կարող անանդրադարձ մնալ. «Չարենցի ամբողջ ստեղծագործությունը, նրա առաջին իսկ էջերից սկսած, հայրենիքի բախտի հետ կապված գրողի հույսի, երազի, հուսավառության ու հիասթափության, հոգեկան վերելքի ու անկման պատմությունն է: Այդ իսկ պատճառով Եղեռնը թեմա չէ Չարենցի համար, այլ նրա պատմափիլիսոփայության բաղկացուցիչ անտրոհելի մասը, ուստի խոսել նրա ստեղծագործություններում Եղեռնի արտացոլման մասին՝ նշանակում է քննության առնել ազգային ճակատագրի չարենցյան բոլոր արծարծումները՝ հույսի ու հիասթափության փուլերով, պատճառների ու հետևանքների որոնումներով» (էջ 176), - գրում է Ժ. Քալանթարյանը «**Եղեռնապատում ըստ Եղիշե Չարենցի**» ուսումնասիրության մեջ:

Առաջին հայացքից այս դիտարկումը կարող է չափազանցված թվալ, սակայն քննադատը, սկսելով Չարենցի ստեղծագործության առաջին շրջանից, բանաստեղծի աշխարհայացքի աստիճանական զարգացման քննությամբ փաստում է, որ նույնիսկ ավանդաբար խորհրդանշական մեկնաբանության ենթարկվող գործերում («Հրո երկիր», «Տեսիլաժամեր», «Կապուտաչյա հայրենիք») բանաստեղծն իրացնում է ազգային ողբերգության ու ոճրի թեմաները: Իսկ արդեն «Դանթեական առասպել» ու «Ազգային երազ» պոեմներում մի դեպքում՝ երազների տապալումը, իսկ մյուսում՝ անկման քաղաքական հիմքերի փնտրտուքը բանաստեղծին բերում են հուսահատության:

Եղեռնի պատկերների ուղղակի վերարտադրությունը փոխարինվում է ողբերգության պատճառների քննությամբ, ինչն իր բարձրակետին է հասնում «Երկիր Նաիրի» վեպում: Եղեռնի թեմայի ներքին անվերջ արծարծումների փաստումն է երկարաշունչ ու ողբերգության ցավի հետ

ԳՐԱԿԱՆԱՍԻՐՈՅԻՆՆԵՐ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (42) ԱՊՐԻԼ-ԻՄԱԿ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

գուգահեռելի, կարծես ավարտ չունեցող «Կոմիտաս» պոեմը: Այստեղ Չարենցը վերջապես կարողանում է մեծ ողբերգությունը ներկայացնել առանց այլաբանության, ցույց տալ ժողովրդի պատմությանը ձուլված մեծ անհատի կենսագրության ավարտը և երազանքը՝ վերադառնալ տուն, որն այլևս չկա:

Առանձին անդրադարձի կարիք ունի նաև կնոջ ու սիրո իդեալների թեման, որով սկսվում է Եղիշե Չարենցի պոեզիան և շարունակվում մինչև վերջին բանաստեղծությունները: Իր «**«Երեք երգ...»-ից մինչև Նավգիկե**» ծավալուն հոդվածում պրոֆեսոր Քալանթարյանը խորափանցությամբ, հոգեբանական նրբերանգների նկատմամբ մեծ ուշադրությամբ, բացահայտում է քնարական պոեզիայի նախասիրած թեմաների բազմակերպ դրսևորումներն ու այդ բազմազանության աղբյուրները: Գրականագետը ցույց է տալիս կերպարի զարգացման օղակները՝ **«ցնորք-աղջիկ»- «քույր-կին»- «Շամիրամ»- «հետերա-ցնորք»-«գոգալ»-«Մանոն Լեսկո»-«Նավգիկե»**, հիմնավորում դրանց հոգեբանական պատճառաբանվածությունն ու ներկայացնում գեղարվեստական արտահայտչամիջոցների հնարավոր աղբյուրները:

Ինչպես բոլոր խոշոր հեղինակների ստեղծագործությունների, Եղիշե Չարենցի պոեզիայի դեպքում ևս արծարծվել են գրական առնչությունների ու թողած հետագծի հարցերը: Գրական տեքստերի ու հեղինակությունների հետ կապերի բազմազանությունից առանձնանում է Չարենց-Նարեկացի առնչությունը, որի վրա ուշադրություն է հրավիրում Ժ. Քալանթարյանը **«Ինչպես վկա է մեր հին Նարեկացին»** հոդվածում: Ըստ ուսումնասիրողի՝ միջնադարի հանճարի ստեղծագործությունը, նրա կերպարը տևական ժամանակ զբաղեցրել են Չարենցի միտքը: Նարեկացին՝ որպես ազգային բանաստեղծության խորհրդանիշ, հանդիպում է ոչ միայն ուղղակի հիշատակությունների ձևով, ինչպես, օրինակ, «Տաղարան» շարքի երկու հանրահայտ՝ «Հայաստանին» և «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծություններում է, այլ նաև անուղղակի ձևով: Ի մասնավորի՝ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկի արձագանքները նկատելի են 1920 թվականին գրված «Մահվան տեսիլ» բանաստեղծության ինքնազոհաբերման ու կախաղանի հայտնի պատկերում և մի քանի այլ ստեղծագործություններում:

Գրականագետն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ ժամանակներում Նարեկացուն անդրադարձները ոչ միայն չէին խրախուսվում, այլև մերժելի էին: Դեպի հոգևոր-եկեղեցական մշակույթ հղումները համարվում էին ազգայնականության արտահայտություն, ավելին՝ հակասում էին հենց իր՝ Չարենցի տվյալ շրջանի աշխարհայացքին: Այս համատեքստում գրականագետն անդրադառնում է «Գիրք ճանապարհիի» շուրջ ստեղծված իրավիճակին և կանգ է առնում հատկապես Չարենցի կյանքի վերջին շրջանում ստեղծած **«Ինչպես հնում վկան այն՝ Նարեկացին»** սոնետի, «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» շարքի և «Վերջին աղոթք» բանաստեղծության ու «Իմ լերան աղոթքը» պոեմի քննության վրա: Բացահայտվում են այս ստեղծագործությունների բնույթի, ուղղվածության, ինչպես նաև Չարենցի աշխար-

հայացքի փոփոխության ու Նարեկացու ազդեցության հետ առնչվող ուշագրավ երևույթներ. «Չարենցը կատարելապես ինքն է նաև այն դեպքերում, երբ շփման եզրեր ունի Նարեկացու հետ: Որոնումները, այդ թվում և Նարեկացուն դիմելը, Չարենցի համար եղել են ինքնարտահայտման և սեփական խորքերը ճանաչելու միջոց» (էջ 293),- եզրակացնում է Ժ. Քալանթարյանը:

Գրականության ավանդները ճանաչելու և յուրացնելու ձգտումը, զարգացման նախորդ շրջանների «վավերական տեքստերի» ուղղակի վկայակոչումներն ու անուղղակի առնչությունները, իհարկե, բնորոշ են ոչ միայն Չարենցի ստեղծագործությանը, այլև հետագա բոլոր այն բանաստեղծներին, ում համար Չարենցի պոեզիան դարձավ գրականության գագաթնակետ ու «վավերական տեքստ»:

Հետչարենցյան հայ պոեզիան իր բազմազան դրսևորումներով թեև չդարձավ Եղիշե Չարենցի բանաստեղծական գծի ժառանգորդն ու շարունակողը (թերևս չէր էլ կարող դառնալ), սակայն առանձին բանաստեղծների որոշ ստեղծագործություններում, պատկերներում նկատվեցին ու նկատվում են հայոց բանաստեղծության հանձարի պոեզիայի արձագանքները: Նույնիսկ հայ գրականության զարգացման արդի ընթացքն իրենց ստեղծագործությամբ պայմանավորող հեղինակներն անտես թելերով ու շերտերով, միջնորդավորված կամ ուղղակի, կապված են Եղիշե Չարենցի բազմաժանր ստեղծագործությանը: Այս տեսանկյունից ուշագրավ է «Եղիշե Չարենց» ժողովածուն եզրափակող **«Չարենցյան ինչ-ինչ ազդակներ արդի պոեզիայում»** ակնարկը: «Ամենին էլ պատահական չէ,- գրում է Ժ.Քալանթարյանը,- որ չարենցյան ոճերը, դարձվածներն ու պատկերները շարունակում են ազդել ժամանակակից բանաստեղծների վրա՝ երբեմն նախորդ սերնդով միջնորդավորված, ավելի հաճախ՝ ուղղակիորեն: Խոսքն այստեղ չի վերաբերում չարենցյան ավանդների ամբողջ համակարգին, այլ Չարենցի պոեզիայի այն հատկանիշներին, որոնք այսօր հետմոդեռնիզմի տիրապետության շրջանում ևս ընկալվում են իբրև արդիական և շարունակվում են ժամանակակից բանաստեղծների երկերում» (էջ 295):

Ուսումնասիրողը, առանձնացնելով Չարենցի կողմից ժամանակի ունիվերսալ ու յուրահատուկ ընկալման արտահայտություն՝ «Աչքերս հառել են անցյալին՝ ապագայի նժույգը նստած...» տողը, արտածում է «ապագա-անցյալ-ապագա» սխեման, որի հարաբերությամբ էլ քննում է Համո Սահյանի, Միլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի կողմից ժամանակի եռաչափ ընկալման ու գեղարվեստական իրացման առանձնահատկությունները: Ըստ Ժ. Քալանթարյանի՝ նշյալ բանաստեղծները, նաև նրանց հաջորդները՝ Արևշատ Ավագյանը, Էդվարդ Միլիտոնյանը, Հենրիկ Էդոյանը, Հովհաննես Գրիգորյանը, ավելի հակված են դեպի ժամանակի ընկալման կամ միագիծ-ուղիղ, կամ շրջանաձև կերպերը, և, ի վերջո, նրանք հանգում են ժամանակի անտրոհելիության կամ քառասյանության գաղափարին: «Այսինքն՝ Չարենցը աշխարհայացքով և, անշուշտ, ժամանակի թելադրանքով, բանականությամբ կարգավորվող աշխարհի կողմնակից է, ուր իրերն ու երևույթները գտնվում են տրամաբանական,

պատճառահետևանքային կապի մեջ, և ընդհանուր առմամբ էլ ժամանակն անցյալից շարժվում է դեպի ապագա: Ժամանակակից բանաստեղծների համար ժամանակը տիեզերական քառսի մի արտահայտություն է» (էջ 301),- գրում է քննադատը՝ հղում կատարելով հետմոդեռն փիլիսոփայության համար հիմնաքարային՝ չկարգավորված, քառսի հետ սահմանակից իրականության ու տեղային ճշմարտության հասկացություններին: Ուստի՝ «Իր բազմաշերտ ու բազմաբովանդակ ստեղծագործությամբ Ե. Չարենցը կանգնած է այսօրվա պոեզիայի ակունքներում և հաճախ անտեսանելիորեն շնչավորում է ժամանակակից բանաստեղծների մտածողությունը» (էջ 310):

Հիրավի, Եղիշե Չարենցի բանաստեղծությունը, նրա բազմաժանր ստեղծագործությունը միջնորդ է անցյալի ու ներկայի գրականությունների միջև և, անկասկած, այդպիսին կլինի նաև ապագայում՝ արդեն անցյալ դարձած մեր ներկայի հարաբերությամբ: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր անդրադարձ Չարենցի ստեղծագործությանը, «մեծ բանաստեղծի անհատական ընկալման յուրաքանչյուր տարբերակ» (էջ 9), ինչպես բնութագրում է իր ժողովածուն Ժենյա Քալանթարյանը, մեծ նշանակություն ունի նրա բազմախորհուրդ ստեղծագործության ուսումնասիրության համար:

Սակայն, մեր խորին համոզմամբ, վաստակաշատ գրականագետի «**Եղիշե Չարենց**» գիրքը դուրս է գալիս «անհատական ընկալման տարբերակ» բնորոշման սահմաններից և իր գիտական բարձր մակարդակով, արծարծվող խնդիրների կարևորությամբ ու նոր բացահայտումներով արժանի տեղ է զբաղեցնում չարենցագիտության ամենանշանակալի ձեռքբերումների կողքին:

Հայկ Ա. Համբարձումյան
Բանաս. գիտ. թեկնածու

Summary

THE BOOK “YEGHISHE CHARENTS. RESEARCHES” BY JENYA QALANTARYAN

Hayk H. Hambardzumyan

The present article is about the book “Yeghishe Charents” by Professor Jenya Qalantaryan, where the different years’ researches of professor are collected, which are dedicated to the works of the great Armenian poet Yeghishe Charents. In some articles we can read about different periods and different problems of the poet’s literary. The author analyzes new facts and many famous works of Charents and makes a lot of discoveries. Jenya Qalantaryan’s new book is a new word in charentsology.